Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2019 թվականի սեպտեմբերի 6-ի N384-L որոշմամբ
Գործում է սկսած 2019 թվականի սեպտեմբերի 16-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

Ուսանողական վարկերի տեղեկատվական ամփոփագիր («Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից վերաֆինանսավորվող)		
Ընդհանուր պայմաններ		
1.	Վարկի նպատակ	ՀՀ պետական կամ ՀՀ պետական հավատարմագրություն ունեցող ԲՈՒՀ-երի բակալավրիատի և մագիստրատուրայի ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ուսանողների ուսման վարձի վճարում ***(Պետական ԲՈՒՀ-եր, Պետական հավատարմագրություն ստացած ոչ պետական ԲՈՒՀ-եր)***
		http://edu.am/index.php/am/documents/view/552
2.	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
3.	Վարկի նվազագույն ժամկետ	12 ամիս
4.	Վարկի առավելագույն ժամկետ	ուսումնառության ժամկետ[1] + 6 տարի, սակայն ոչ ավել քան 10 տարի ***(վարկը կարող է ավելի կարճ ժամկետով տրամադրվել միայն հաճախորդի համաձայությամբ)***
		[1]ուսումնառության ժամկետ է համարվում ուսանողի՝ բակալավրիատում , մագիստրատուրայում կամ կլինիկական օրդինատուրայում սովորելու տարիները, ընդ որում ուսումնառության ժամկետի ընդհատում չի համավում ՀՀ ՊՆ ԶՈՒ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ժամանակահատվածը
5.	Վարկի նվազագույն գումար	չի սահմանվում

6.	**Վարկի առավելագույն գումար**	700 000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան 1 տարվա ուսման վարձը ***ընդ որում, յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կարող է տրամադրվել 1 վարկ***
7.	**Ուսումնառության ամբողջ ընթացքում տրամադրված վարկերի հանրագումար**	**4 ուսումնական տարվա համար**, առավելագույնը 2 800 000 ՀՀ դրամ
8.	**Վարկի մարման եղանակ**	Ամսական անուիտետային վճարներ, ընդ որում ուսումնառության ընթացքում մարվում են միայն տոկոսագումարները (առավելագույնը 4 տարի), իսկ ուսումնառության ավարտից հետո կատարվում են վարկի մայր գումարի և տոկոսագումարների հավասարաչափ մարումներ
9.	**Տարեկան անվանական տոկոսադրույք** [1]	**9%** որից պետությունը սուբսիդավորում է 2%-ը՝ բոլոր ուսանողների համար, իսկ 3%-ը՝ նախորդ ուսումնական տարվա ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար
10.	**Տարեկան փաստացի տոկոսադրույք**[2]	**9.38%**
11.	**Վարկի տրամադրման/սպասարկման վճար**	չի սահմանվում
12.	**Ընթացիկ հաշվի բացում, սպասարկում**	անվճար
13.	**Ժամկետանց վարկի/տոկոսագումարի գծով տույժ/տուգանք**	0.1% օրական
14.	**Վաղաժամկետ մարման տույժ**	չի սահմանվում
15.	**Վարկի տրամադրման եղանակ**	անկանխիկ՝ ԲՈՒՀ-ի հաշվին փոխանցելու միջոցով
16.	**Ապահովվածություն**	նվազագույնը 1 երաշխավոր
Վարկառուի/երաշխավորի նկատմամբ պահանջներ		

[1] Վարկի տարեկան տոկոսադրույքն ենթակա է վերանայման, եթե վարկը չի վերաֆինանսավորվում համապատասխան կազմակերպության կողմից կամ վերաֆինանսավորող կազմակերպությունը փոփոխել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը

[2] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

17.	**Վարկառուի կարգավիճակ**[3]	1) ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ, և
		2) ՀՀ պետական կամ ՀՀ պետական հավատարմագրություն ունեցող ԲՈՒՀ-երի՝ վճարովի համակարգի բակալավրիատի մագիստրատուրայի, կամ կլինիկական օրդինատուրայի ուսանող (հավակնորդ)
18.	**Երաշխավորի նկատմամբ սահմանվող պահանջներ**	1) երաշխավորը/երաշխավորներից առնվազն մեկը (եթե առկա են 1-ից ավելի երաշխավորներ) պետք է հանդիսանա վարկառուի ծնողը/խնամակալը (երկկողմանի ծնողազուրկ և չափահաս ուսանողների համար երաշխավոր կարող է հանդիսանալ 3-րդ անձը), և
		2) երաշխավորը պետք է ունենա եկամուտ (մեկից ավել երաշխավորների առկայության դեպքում երաշխավորներից առնվազն մեկը պետք է ունենա եկամուտ)
		3) վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ երաշխավորը պետք է լինի 21-68 տարեկան:
19.	**Վարկառուի/երաշխավորի վարկային պատմության նկատմամբ պահանջ (վարկի առաջին և յուրաքանչյուր հաջորդ փուլի տրամադրման դեպքում)**	1) դիմումի ընդունման օրվա դրությամբ վարկառուն/երաշխավորը չպետք է ունենա ժամկետաց պարտավորություններ (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն), և
		2) դիմումի ընդունման օրվան նախորդող 1 տարվա ընթացքում (365 օր) վարկառուի/երաշխավորի ժամկետանց պարտավորությունների գծով օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը,
		3) դիմումի ընդունման օրվան նախորդող երկու տարվա ընթացքում երաշխավորը չի ունեցել անհուսալի դասակարգված վարկային պարտավորություններ,
		3) վարկային պատմության բացակայությունն ընդունելի է:
Այլ պայմաններ		
20.	**Վարկի տրամադրման դրական գործոններ**	դրական վարկային պատմություն
21.	**Վարկի մերժման գործոններ**	1)բացասական վարկային պատմություն, 2)կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում, 3)այնպիսի տեղեկատվություն, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը, 4)սույն ծրագրի շրջանակներում ուսանողին նախկինում տրամադրված վարկը վերաֆինանսավորող ընկերության կողմից ճանաչվել է ոչ որակավորված, 5) այլ գործոններ

[3] Վարկառու չեն կարող դառնալ այն ուսանողները, որոնք սույն ծրագրի շրջանակներում նախկինում տրամադրված վարկը վերաֆինանսավորող ընկերության կողմից ճանաչվել է ոչ որակավորված

22.	**Որոշման կայացման առավելագույն ժամկետ**	պահանջվող բոլոր փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օր
23.	**Կայացված որոշման մասին վարկառուին տեղեկացնելու ժամկետ**	որոշման կայացումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օր Բանկը վարկի տրամադրան վերաբերյալ կայացրած որոշման մասին հաճախորդին կարող է տեղեկացնել Բանկի տարածքում, հեռախոսազանգի կամ էլեկտորնային փոստի միջոցով:
24.	**Վարկի տրամադրման ժամկետ**	դրական որոշման կայացման դեպքում առավելագույնը 1 աշխատանքային օր
25.	**Որոշման վավերականության առավելագույն ժամկետ**	15 աշխատանքային օր
26.	**Վարկի դիմումի ընդունման, ձևակերպման և տրամադրման վայր**	Բանկի բոլոր մասնաճյուղեր
27.	**Հաճախորդի/երաշխավորի կողմից Բանկ ներկայացվող փաստաթղթեր**	Համաձայն հավելված 1.1-ի

Հավելված 1.1

Ուսանողական վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

	Վարկառուից, երաշխավորից(ծնողներ, խնամակալ կամ 3-րդ անձ) պահանջվող փաստաթղթերի ցանկ և դիմումի ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվություն	**Ներկայացման ձևը և վաղեմության ժամկետը՝ մինչև յուրաքանչյուր փուլում տվյալ փաստաթուղթը ներկայացնելը**	**Բանկում պահպանման ձևը**
1	Վարկ ստանալու դիմում-հայտ	բնօրինակ	բնօրինակ
2	Վարկառուի(ուսանողի), երաշխավորի(ծնողներ, խնամակալ,3-րդ անձ)), անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիրը, նույնականացման քարտ կամ դրանց փոխարինող այլ փաստաթուղթ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը	բնօրինակ	պատճե (սքանավորված)
3	Վարկառուի(ուսանողի), երաշխավորի(ծնողներ, խնամակալ, 3-րդ անձ) ՀԾՀ/ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք	Բնօրինակ կամ էլեկտրոնային	պատճե (սքանավորված)

4	Վարկառուի(ուսանողի), երաշխավորի(ծնողներ, խնամակալի, 3-րդ անձ) ամուսնության վկայականներ(առկայության դեպքում)	բնօրինակ	պատճե (սքանավորված)
5	Վարկառուի(ուսանողի)ի ծննդյան վկայական	բնօրինակ	պատճե (սքանավորված)
6	Ուսումնական հաստատությունից վարկառուի(ուսանողի) ուսման վարձի վճարումն իրականացնելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, փոխանցման հաշիվ և այլն);	բնօրինակ	բնօրինակ
7	Տեղեկանք ԲՈՒՀ-ից, որտեղ պետք է նշվեն ուսանողի ֆակուլտետը, կուրսը (ստացիոնար/հեռակա), մասնագիտությունը և ուս. տարվա վարձի չափը , տվյալ ուս. տարվա համար չվճարված ուսման վարձի մնացորդը, ԲՈՒՀ-ի բանկային հաշվի համար, ուսանողի ուսումնառության ավարտի տարին և ամիսը:Գերազանց ուսումնառության դեպքում նաև պետք է նշում լինի կոնկրետ ուս. տարվա ընթացքում տվյալ ուսանողի գերազանցության վերաբերյալ:	բնօրինակ	բնօրինակ
8	**Վարկառուի, երաշխավորի(ծնողներ, խնամակալ կամ 3-րդ անձ) եկամուտները հավաստող փաստաթղթեր*** ***(վարկառուի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր պահանջվում է, եթե վերջինս ունի եկամուտներ)***		
8.1	Տեղեկանք(ներ) աշխատավայրից	բնօրինակ, 30 օր	բնօրինակ
8.2	Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ կնքված օրենքով սահմանված կարգով	բնօրինակ	պատճե (սքանավորված)
8.3	Տեղեկանք ֆինանսական կազմակերպությունից վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն 12 ամսվա ընթացքում ստացված պարբերական փոխանցումների վերաբերյալ, բանկային հաշվից քաղվածք	բնօրինակ, 30 օր	բնօրինակ
8.4	Վճարովի աշխատանքի կատարումը կամ ծառայությունների մատուցումը հիմնավորող փաստաթղթեր (Ծառայությունների մատուցման պայմանագրեր, տեղեկանք, հայտարարագրեր՝ տրված ֆիզ. անձանց կողմից)	բնօրինակ	Պայմանագրերը պատճե (սքանավորված), մնացած փաստաթղթերը՝ բնօրինակ
8.5	Կենսաթոշակի վերաբերյալ տեղեկանք ' երկարամյա ծառայության (Ոստիկանության, պաշտպանության նախարարության, քրեակատարողական և այլ համապատասխան մարմինների աշխատակիցներ, մանկավարժներ, դատավորներ և այլն) կերակրողին կորցնելու և այլն (բացառությամբ տարիքային կենսաթոշակի) ստացման վերաբերյալ	բնօրինակ	բնօրինակ
8.6	<u>Ձեռնարկատիրական կամ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող հաճախորդների համար փաստաթղթերի ցանկ</u>	***Տես Հավելված 1.2***	

	Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր		
*	***Սույն ցանկի 8-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են ըստ հաճախորդի կողմից ստացվող եկամուտների տեսակի (առնվազն մեկը կամ մի քանիսը կամ բոլորը միաժամանակ):***		

Հավելված 1.2

Ձեռնարկատիրական (այդ թվում՝ ԱՁ) գործունեությամբ զբաղվող հաճախորդների համար փաստաթղթերի ցանկ

1	Հարկ վճարողի հարկային հաշվառման համար (ՀՎՀՀ) և պետական գրանցման վկայական	պատճե (էլեկտրոնային կամ թղթային)
2	Կանոնադրություն (առկայության դեպքում)	
3	Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվություն (լիզենզիա), եթե ՀՀ օրենսդրության համաձայն տվյալ գործունեությունն ծավալելու համար նախատեսված է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվությունը	
4	Վերջին 1 տարվա ֆինանսական և հարկային հաշվետվություններ՝ հաստատված հարկային մարմինների կողմից	
5	Վերջին 12 ամիսների եկամուտների և ծախսերի հաշվետվությունները/գրառումները	
6	Կազմակերպության եկամուտները հիմնավորող ներքին հաշվառման փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում)	
7	Տեղեկանք դիվիդենտի ստացման վերաբերյալ (առկայության դեպքում) և դրամարկղի ելքի օրդեր, բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշտության դեպքում)	բնօրինակ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

2. Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

3. Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:

8. Արտարժույթով վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը: Փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

9. Արտարժույթով վարկերի դեպքում վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով:

10. Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

11. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

12. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

13. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

14. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

15. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

16. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

17. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

18. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

19. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

20. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

21. Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ